Արձանագրություն N 4

ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-55 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք.Երևան **« 02» «09» 2026թ. Ժամը 10:00**

Նիստին մասնակցում էին՝

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի պետի պարտականությունները կատարող Ի. Սաֆարյանը -հանձնաժողովի նախագահ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Լ. Ստեփանյանը -գնահատող անդամ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության կոմունալ շահագործման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ղազարյանը - գնահատող անդամ,

ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Է. Մնացականյանը -գնահատող հանձնաժողովի քարտուղար

Օրակարգ՝

ՀՀ ՆԳՆ կարիքների համար կենցաղային և հանրային սննդի նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-55 ծածկագրով գնահատման նիստը կասեցվել էր հայտերի ուսումնասիրման և գնահատման համար.

1. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

Մասնակիցների ներկայացրած հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան, ծրագրի կողմից ճանաչվում են որպես վավեր և համակարգը թույլ է տալիս բացել հայտերը:

2. Տվյալներ հայտերի ուսումնասիրման և գնահատման մասին.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-55 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերն, որոնց մեջ արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները և ենթակա են շտկման.

Մասնավորապես՝

1. «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հետևյալ անհամապատասխանությունը՝ անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագրում նշված ապրանքի ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը և ապրանքային նշանը :

2 «Էկսիմտրեյդ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում բացակայում է Հավելված 1.3՝ իրական շահառուի կայքէջի հղումը,ինչպես նաև անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագրում նշված ապրանքի ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը և ապրանքային նշանը :

3 «Արթ Պլյուս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ևս առկա է անհամապատասխանություն մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում ֆիրմային անվանումը, արտադրողի անվանումը ապրանքային նշանը և մակնիշը նշված է «և այլն»-ով, որը ենթակա է շտկման:

4 «ՏԵՆԴԵՐ ՍՈԼՈՒՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տեխնիկական բնութագրում 12-րդ չափաբաժնի մասով՝ անհրաժեշտ է հստակեցնել «30 միկրոնի մեջ» արտահայտությունը, քանի որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրում նշված է «30 միկրոնից ոչ պակաս»:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Է-55 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման նիստը կասեցվում է 1 աշխատանքային օրով և առաջարկվում է «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ին, «Էկսիմտրեյդ» ՍՊԸ-ին, «ՏԵՆԴԵՐ ՍՈԼՈՒՇՆ» ՍՊԸ-ին և «Արթ Պլյուս Գրուպ» ՍՊԸ-ին 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվեց որոշում՝ կողմ 3, դեմ 0 :

Հանձնաժողովի նախագահ՝ Ի. Սաֆարյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Ստեփանյան

Ա. Ղազարյան

Քարտուղար՝ Է. Մնացականյան